

«Կիլիկիա» Նաւագնացութեան Ցուցադրութիւն

20 Հոկտեմբեր 2005
Երուսաղէմ

Որոշեալ ժամուն մուտք գործեցինք ժառանգաւորաց սրահ, ուր ցուցադրուելու էր Կիլիկիա նաւու նաւագնացութեան DVD-ին: Բայց դարձեալ նման շատ շատ միջոցառումներու, սրահի հագի թէ քանի մը աթոռներն էին գրաւուած, ընդհանրապէս վանական պաշտօնէութեան կողմէ, բարեբախտաբար մինչեւ Սրբ. Պատրիարք Հօր սրահ մուտքը առ աւել քանի մը նստարաններ գրաւուեցան նաեւ ժառանգաւորաց սաններու սրահ ժամանումով:



Ս. Աթոռի գաւազանակիր Իսահակ Աբեղայ Մինասեան կատարեց պահուն բացման խօսքը, որուն հետեւեցաւ 4 խորագրերէ բաղկացեալ DVDի ցուցադրութիւնը:

Առաջին բաժնի ցուցադրելի DVDին, որն կը վերաբերէր ինքնին նաւաշինութեան թէ Սեւանայ Լիճի մէջ երկամեայ փորձարական շրջանին, զանց առնուեցաւ ժամանակի նեղութեան պատճառաւ:

Շուտով անցանք երկրորդ բաժնի ներկայացման ուր «Կիլիկիա» նաւը Սեւանայ Լիճէն ցամաք կը բերուէր ու կը յարմարցուէր սալակի մը վրայ, որը փոխադրակարգի մը ամրացուելէ ետք իր ցամաքային ճամբորդութիւնն էր կատարելու մինչեւ Սեւ Ծովու վրայ գտնուող Փօթի նաւահանգիստը:



Անգլերէն Mission Impossible "անկարելի ուղղետրութիւն" վարկածի հարազատ պատկերացումը այս ուղղետրութիւնն էր:

Այդ խայտարակ իր 60րդ գարունը շատոնց հանդիպած սալակի վրայ բերձուած տասնեակ մը թոն ու աւելի կշռող փայտաշէն մարմինը «Կիլիկիա» նաւու 20 մետր երկայնքով թէ 7 մետր լայնքով թէ ինչպէ՞ս ընթացք կ'ըներ ոլոր-մոլոր, աւելին խճուղիներէ, սարահարթերէ, ճահիճներէ, փապուղիներէ բացառաբար կանոնաւոր ճամբաներէ ուղղակի ապշահար կը թողուր

հանդիսատեսը, որը աթոռին քամուած կը զգուշանար անտեղի շարժում մը կատարելէ մի գուցէ այդ շարժումը պատճառ դառնար այդ սալակին թէ նաուն ձորն ի վար դաւազոր անկումին, որը փառք Տիրոջ աւելին փառք այդ հիասքանչ վարորդին, թէ ընկերակիցներուն չ'պատահեցաւ:

Երեւանէն մինչեւ Հայ Վրացական սահմանագլուխ ապա Փոթի, Կիլիկիա նաւու տասնօրեայ ճամփորդութիւնը մեզ համար դառնաւ կէս ժամու ջղային արկում:

DVDի սկաւարակի Յրդ բաժինը կ'անդրադարձար Կիլիկիոյ նաւուն Յուլիս 14, 2004ին ջուր վերադարձին ու Փոթիից սկիսք առած ճամբորդութեան մինչեւ Սոչի Պուլկարիա - Պէլյուօ Անճաւ:

Ինքնին միջնադարեան նաւի տիպին հարազատ փոխադրամիջոցի գնացքը ալեկոծ ծովերու խորը թէ անդին բացարձակ խելագարութիւն է եւ երբեք արկածախնթրութիւն: Այսուհանդերձ խելագարութիւն մը որը անսահման խանդաւարութիւն կ'ստեղծէ ամէն շրջան ուր կը խարսխէ «Կիլիկիան» շիման մէջ մտնելով աշխարհացրիւ Հայու բեկորներու հետ, որոնք պահ մը, երանելի պահ մը, կ'ապրին շունչն հաչրենի, որը բացառիկ տաղանդով, Հայ երգով, ազգային տարազով ու պարով կը փոխանցեն «Կիլիկիոյ» անձնակազմը:



«Կիլիկիա» նաւու առած ընթացքը:

Տեսաերիզը իր չորրորդ մասով կը ներկայացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հօր օրհնութեամբ գօտեպնդուած նաւու ուխտագնացութիւնը մինչեւ Հայկական թագաւորութիւն Կիլիկիոյ, մինչեւ Այաս նաւահանգիստ - Հայոց ու Մուսա Լեռ:

Ժամանակի Հայոց թագաւորութեան կիսաւեր բերդերը, ամոռոցները եւ մանաւանդ Կիլիկիոյ բնաշխարհը կը ներկայանան իրենց հարազատ գոյնով ու թարմ շունչով, կարծես դեռ երեկ թողած ըլլայինք մեր հողը:

Վերջապէս այս 60 վայրկեաններու մէջ խտացուած «Կիլիկիա» տեսաերիզը, պահ մեզ ապրեցուց մեր պատմութեան ու անցեալի արդար հպարտանքը, եւ ոչ պակաս ան պարզեց յանձինս «Կիլիկիա» նաւու ծրագրի

Նախաձեռնողների խմբակի, ներկայ Հայուն ամուռ Եկարագիրը, կամքն ու կորովը ժայրեր ճեղգելու:

Սրբազան Հայրը իր փակման խօսքի ընթացքին շնորհաւորեց «Կիլիկիոյ» նաւու անձնակազմի անուամբ մեր մէջ գտնուող 2 լուսանկարիչները յանձինս Պրն. Սամուէլ Բաբասեանի (բեմադրող) եւ Պրն. Հայկ Բաղալեանի (ֆոտոնկարիչ), որոնք իրենց մասնագիտութեան առաւելագոյն տաղանդը կը ցոլացնէին այս DVDի պատրաստութեամբ:



Սրբազան Պատրիարք Հայրը կը յանձնէ յուշանուէրը լուսանկարիչներուն:

Սրբազան Պատրիարք Հայրը դրուատեց անոնց մէջմէկ դիւցազն «Լեկեճո» եւ Հայկական յախճապակիի կտոր մը յանձնեց անոնց որպէս յուշանուէր:

Մեր սուղ ժամերը առաւելագոյնս իմաստաւորած ըլլալու գոհանակութեամբ բաժնուեցանք սրահէն:

